

Evaluation of Ms Gohar Hakobian's Thesis

THE IRANIAN CASPIAN-ATURPATAKAN SPRACHBUND

I am so pleased to have been given the chance to review this thesis. This is an excellent and unusually interesting dissertation. As a matter of fact, Iranian linguistics and dialectology is practiced very excellently in what I dare to name "Yerevan school of Iranian Linguistics", led by the prominent scholar, Professor Garnik Asatrain.

As I said, this thesis deals with the (New West) Iranian dialects. As a branch of the Indo-European family, the Iranian dialects are spoken by more than 80 million people in a wide area from Turkey (with Zazaki) to China (with Sarikoli), and mainly cover the whole of Iran, Afghanistan, and Tajikistan. The new Iranian languages are those used in the Iranian plateau after the emergence of Islam in the region (ninth or tenth century). These languages are considerably more in number in comparison with the Old and middle Iranian languages, and represent more phonetic and grammatical simplifications in comparison with their ancestors. What is interesting about these languages is that most of them do not have a direct and specified ancestor, and only Persian and Yaghnobi can be regarded as those having direct ancestors (Middle Persian and Sogdian, respectively). The new Iranian languages are now divided into 'eastern' and 'western' subgroups. New west Iranian languages are basically spoken in today's Iran, and include Persian (the widest used Iranian language, with Iranian, Afghan, and Tajik variations), Kurdish, Baluchi, Mazandarani, Lori, Gilaki, Tâti, Tâleši, Lârestâni, Bashkardi, and some others. There are languages, of course, spoken beyond this border, and yet considered to be



دانشکده هنرهای نمایشی و موسیقی

University of Tehran  
University College  
of Fine Arts  
School of Performing  
Arts and Music

تهران، خیابان انقلاب  
دانشگاه تهران  
پردیس هنرهای زیبا  
finearts@ut.ac.ir  
مندوق پستی:

۱۴۱۵۵-۶۴۵۸  
تلفن: ۶۶۴۸۵۴۱۰  
دورنگار: ۶۶۴۱۸۱۱۱۰

شماره:

تاریخ:

پیوست:

west Iranian, like Baluchi (which is also spoken in Pakistan), Zazaki (spoken in Turkey), and Kumzari (spoken in Musandam peninsula in Oman). Most of these languages do not have a writing system, and make use of Persian alphabet. Iranian Persian is also written this way, but the Tajiks make use of Cyrillic alphabet.

Ms. Gohar Hakobian's thesis, "The Iranian Caspian-Aturpatakan Sprachbund" deals with an important New West Iranian *Sprachbund* (as the remotely related, sometimes even closely related languages with similar features on the levels of phonology, morphology, syntax and lexicon, as a result of long coexistence and language contacts). The languages covered in this work are all north-western Iranian ones, including Zazaki, Gorani, Talishi, Tati, Gilaki, Mazandarani, Semnani, and some Central Caspian dialects, along with some of the transitional dialects of the Central Alborz. The reason why Zazaki (which is now mainly spoken in Turkey) is listed among these Caspian languages is that the author considers the cradle of Zazaki to be Daylam in South Caspian region. The same thing holds true about Gorani, whose speakers appear to have migrated to their current settlement area (Kermanshah in South-East, Sanandaj in the North-East and the city of Mosul in North-West, generally the region along Iran-Iraqi border) from the South Caspian region.

The Talishi language considered for this work has two major dialects: Southern (spoken in the South-Western shores of the Caspian Sea, namely from Anzali lagoon and lowlands of Gilan Province of Iran), and Northern (extending from the regions of Lankaran, and Astara, up to Yardymli in the Republic of Azerbaijan).

The Tati dialects represented in this study are those extending over a very vast geographical location, stretching from Vafs in the South-East and



Takestan area of Qazvin in the North-East to the Kilit on the banks of the Araxes river, near Nakhijavan province of Republic of Azerbaijan.

Gilaki, on the other hand, a North-Western Iranian Language spreading between the South-Western shores of the Caspian Sea and Northern slopes of the Alborz mountain range, with two major dialects: Western (dialects of Rasht, Fuman, Anzali, etc.) and Eastern (dialects of Lahijani, Langerudi, Machiani, etc.).

Mazandarani (Tabari) is a language spoken in the Province of Mazandaran, between the South-Eastern shores of the Caspian Sea and the Northern slopes of Alborz mountains. Of course the author has introduced another group of dialects namely "The Central Caspian" ones, (including Ramsari, Tonekaboni and Kelardashti) which are normally regarded as dialects of Mazandaran, and located in the Western parts of this Province. Also, dialects of some villages on the road of Tehran to Mazandaran have been separated from the Mazandarani group, which are the dialects of Velatru, Yush, and the villages in the upper tributaries of the Jajrud river. The author has regarded them as "transitional dialects of Central Alborz".

The dialects of Semnan province (including Semnani, Sangesari, Sorkhei, Lasgerdi, Aftari, Shahmirzadi and Biyabuneki) are the other dialects covered by the author.

In order to talk about the *Sprachbund* of the so-called regions, the author has adopted four criteria: Synchronous state, the distribution area, common features in a restricted number of member-languages, and the principle of "primary use *versus* marginal use" in drawing the isoglosses. As the author clearly states, this work is a purely linguistic research, and



also considers the movements of groups speaking different languages (dialects) in the region.

“The phonetic isoglosses” is the first part of the discussion part of this thesis. Done on the basis of several phonemes and clusters (such as  $xw$ ), this part is significant in terms of its several examples, and its impressive bibliographical references. The “Morphological isoglosses” is the major contribution of this thesis, and provides a detailed and comprehensive study of five major issues such as the indicative present tense, The Indicative Progressive tense, Imperfect based on the Parthian Optative, The  $\check{c}i/\check{c}\bar{i}$ - marker of the negation of existence, and finally, the Nominal Inflection (and case marking).

Each of these parts are really impressively studied, for example, in the part dealing with the indicative present tense, the data are divided into two groups: those derived from OIr.  $*-ant-$ , and those without markers. The author provides extensive examples of Zazaki, Eastern Gilaki, Mazandarani, High Taleqani (from the Tatoid group), Velatrui, Yushi and Jajrudī (from the transitional dialects of the Central Alborz), Kalardashti, Tonekaboni and Ramsari (from the Central Caspian dialects), and Sorkhei, Lasgerdi, Aftari, Sangesari and Shahmirzadi (from the dialects of the Semnan region) for the first group, as well as illuminating examples of the second group from Southern Talishi, Western Gilaki, Central Tati, Rudbari (from the Tatoid group), and the Central Caspian dialects. The same approach holds true for the other parts, when in studying the Indicative Progressive tense, the data are divided into four groups (progressives formed with a locative verb, derived from *andar*, and Progressives formed with particles derived from  $kV(r)(V)$ , Progressives based on the combination of *andar* and  $kV(r)(V)$ , and progressive built with a demonstrative.



The Addendum of the work, the lexical isoglosses, is a really impressive part of the work, and clearly shows the efforts made by the researcher.

I really enjoyed reading this work, and learnt a lot from the wealth of the data presented in it. Ms. Hakobian proves that she is very well acquainted with the literature on different issues of the Iranian dialectology, and this may be seen in the extensive list of references she provides for each of her discussions. This reminds me of Carl John Krankhe's seminal PhD thesis defended almost half a century ago, about the linguistic relationships in central Iran. I hope a lot that similar works may be done about the rest of the parts of Iran (especially the southern parts and the shores of the Persian Gulf), in order to complete the puzzle of the linguistic contacts in today's Iran.

However, I may also suggest that transcriptions be done following the conventions of the *Encyclopaedia Iranica* pretty consistently. Although the writer says that "Diacritics were omitted where the place name or dialect in question is generally known", this seems to be necessary for some of the dialects, such as Biyâbânaki, referred to as Biyabunaki in the text. Also, I think the actual isoglosses sketched on the map (like what scholars like Stilo and Krankhe have done) will represent the work better (given the fact that the word isogloss on the title of the thesis justifies this expectation).

Generally, for the scholars and students of Iranian languages, such a study, incorporating so many Iranian languages has always been a primary concern. The fact that Ms Hokobyan has been able to make a very fine use of the Russian sources (which is not within the ability of many other linguists of this field, including me) is a remarkable aspect of this work.

What I can say as a general impression about this thesis is that the work is of a highly reliable comprehensive work, and a tremendously useful

شماره:  
تاریخ:  
پیوست:



دانشگاه تهران  
پژوهشگاه هنرهای زیبا

دانشکده هنرهای نمایشی و موسیقی

University of Tehran  
University College  
of Fine Arts  
School of Performing  
Arts and Music  
تهران، خیابان انقلاب  
دانشگاه تهران  
پردیس هنرهای زیبا  
finearts@ut.ac.ir  
مسدوق پستی:  
۱۴۱۵۵ - ۶۴۵۸  
تلفن: ۶۶۴۸۵۴۱۰۰  
دورنگار: ۶۶۴۱۸۱۱۱

collection of material and up-to-date references, and will surely be appreciated by all those engaged in the study of the Iranian languages. Ms Hakobian has painstakingly examined all the relevant publications, such as grammars, text editions, and articles published until this time, and has systematically incorporated the material of some of the more important works. Therefore, her work provides the reader with an opportunity to investigate the quantity of linguistic material and scholarship available in Iranian too, many of them often inaccessible or simply unknown to some scholars. I have also checked that all the publications of Ms. Hokobian are in line with the subject of this dissertation.

In its scholarship and presentation, Ms. Hakobian has produced an exemplary, and quite original, PhD dissertation, which is also a pleasure to read. The thesis thus makes an important contribution to scholarship on a phenomenon that have not been as intensively explored as other aspects of Iranian linguistics. Therefore, I recommend this work for a PhD degree, and suggest the highest grade possible for this brilliant work.

Sincerely,

Behrooz Mahmoodi-Bakhtiari, Ph.D (Linguistics)  
Associate Professor,  
Faculty of Fine Arts,  
University of Tehran  
30.05.2022





Թարգմանված է անգլերենից

**Փոհար Հակոբյանի «Կասպյան-ատրպատականյան իրանական լեզվամիությունը» թեմայով ատենախոսության մասին կարծիք**

Ես շատ ուրախ եմ, որ ինձ հնարավորություն է ընձեռնվել իմ կարծիքն արտահայտել այս ատենախոսության մասին: Սա գերազանց և չափազանց հետաքրքիր ատենախոսություն է: Ըստ էության, իրանական լեզվաբանությունը և բարբառագիտությունը գերազանց ուսումնասիրվում են ականավոր գիտնական պրոֆեսոր Փառնիկ Ասատրյանի կողմից դեկավարվող «Երևանի իրանական լեզվաբանության դպրոց»-ի (ինչպես ես համարձակվում եմ այն անվանել) կողմից:

Ինչպես նշեցի, այս ատենախոսությունը վերաբերում է նոր արևմտաիրանական բարբառների: Որպես Հնդեվրոպական լեզվաընտանիքի ճյուղ՝ իրանական լեզուներով այսօր խոսում են ավելի քան 80 միլիոն մարդ Թուրքիայից (ներառյալ զազան) մինչև Չինաստան (ներառյալ սարիքոյին) ընկած ընդարձակ տարածքում՝ ընդգրկելով հիմնականում ողջ Իրանը, Աֆղանստանը և Տաջիկստանը: Նոր իրանական լեզուներն այն լեզուներն են, որոնք տարածված են Իրանական սարահարթում իսլամի ծագումից հետո (իններորդ կամ տասներորդ դար): Քանակապես այս լեզուները զգալիորեն ավելի շատ են՝ համեմատած հին և միջին իրանական լեզուների հետ, և ավելի շատ հնչյունական և քերականական պարզեցումներ են ներկայացնում՝ իրենց նախորդող լեզուների համեմատ: Հետաքրքիր է, որ այս լեզուների շատերը չունեն անմիջական և հստակ նախորդող լեզուներ. միայն պարսկերենն ու յաղնոբին կարող են համարվել անմիջական նախորդող լեզուներ ունեցող (համապատասխանաբար միջին պարսկերեն և սողդերեն) լեզուներ: Նոր իրանական լեզուներն այժմ բաժանվում են «արևելյան» և «արևմտյան» ենթախմբերի: Նոր իրանական արևմտյան լեզուները հիմնականում խոսվում են ժամանակակից Իրանում և ներառում են պարսկերենը (ամենալայն տարածում ունեցող իրանական լեզուն՝ իրանական, աֆղանական և տաջիկական տարատեսակներով), քրդերենը, բելուջերենը, մազանդարանին, լորին, գիլաքին, թաթերենը, թալիշերենը, լարեսթանին, բաշքարդին և այլն: Կան լեզուներ, իհարկե, որոնք տարածված են այս սահմանից դուրս, սակայն համարվում են արևմտաիրանական, ինչպես բելուջերենը (որով նույնպես խոսում են Պակիստանում), զազան (խոսվում է Թուրքիայում) և կումգարին (խոսվում է

**Օճանի Մուսանդամ թերակղզում):** Այս լեզուներից շատերը չունեն գրային համակարգ և օգտագործում են պարսկերենի այբուբենը: Իրանական պարսկերենը նույնպես գրվում է այսպես, բայց տառիկները օգտագործում են կիրիլյան այբուբենը:

Տիկին Գոհար Հակոբյանի «Կասպյան-ատրպատականյան իրանական լեզվամիությունը» թեմայով ատենախոսությունը ուսումնասիրում է կարևոր նոր արևմտաիրանական լեզվամիություն (երկար համակեցության և լեզվական շփումների արդյունքում հնչյունաբանության, ձևաբանության, շարահյուսության և բառապաշարի մակարդակներում նույնանման հատկանիշներ ձեռք բերած սերտ ցեղակից կամ ոչ ցեղակից լեզուները): Այս ատենախոսության մեջ ընդգրկված լեզուները բոլորը հյուսիսարևմտյան են՝ ներառյալ գազան, գորանին, թալիշերենը, թաթերենը, գիլաքին, մագանդարանին, սեմնանին, և որոշ կենտրոնական կասպյան բարբառներ և կենտրոնական Ալբորզի որոշ միջանկյալ բարբառներ: Չագան (այժմ հիմնականում տարածված է Թուրքիայում) կասպյան լեզուների շարքում դասվել է այն պատճառով, որ հեղինակը գազայի բնօրրանը համարում է հարավկասպյան շրջանում գտնվող Դայլամը: Նույնը վերաբերում է գորանիին, որով խոսողներն, ըստ երևույթին, գաղթել են իրենց ներկայիս բնակավայր (Քերմանշահը հարավ-արևելքում, Սանանդաշը հյուսիս-արևելքում և Մոսուլ քաղաքը հյուսիս-արևմուտքում, ընդհանուր առմամբ, Իրան-Իրաք սահմանի երկայնքով գտնվող շրջանը) հարավկասպյան շրջանից:

Տվյալ աշխատանքի մեջ քննարկվող թալիշերենն ունի երկու հիմնական բարբառ՝ հարավային (խոսվում է Կասպից ծովի հարավ-արևմտյան ափերում, մասնավորապես՝ Անզալի ծովածոցից մինչև Իրանի Գիլան նահանգի ցածրադիր վայրեր), և հյուսիսային (տարածված է Լենքորանի և Աստարայի շրջաններից մինչև Յարդմլի՝ Ադրբեջանի Հանրապետությունում):

Այս ուսումնասիրության մեջ ներկայացված թաթական բարբառներն այն բարբառներն են, որոնք տարածվում են հսկայական աշխարհագրական տարածքում՝ ձգվելով հարավ-արևելքում գտնվող Վաֆսից և հյուսիս-արևելքում գտնվող Ղազվինի Թաթեսթանից մինչև Արաքս գետի ափին գտնվող Քիլիթ՝ Ադրբեջանի Հանրապետություն Նախիջավան նահանգի մոտ:

Գիլաքին, մյուս կողմից, հյուսիսարևմտյան իրանական լեզու է, որը տարածվում է Կասպից ծովի հարավարևմտյան ափերի և Ալբորզի լեռնաշղթայի հյուսիսային լանջերի միջև ընկած տարածքում, երկու հիմնական բարբառներով՝ արևմտյան






(Ռաջբի, Տումանի, Անգալիի բարբառներ և այլն) և արևելյան (Լահիջանի, Լանգեռուդի, Մաշիանի բարբառներ և այլն):

Մազանդարանին (թաբարի) Մազանդարան նահանգում, Կասպից ծովի հարավ-արևելյան ափերի և Ալբորզ լեռների հյուսիսային լանջերի միջև ընկած տարածքում խոսվող լեզու է: Իհարկե, հեղինակը ներկայացրել է բարբառների մեկ այլ խումբ՝ «կենտրոնական կասպյան» բարբառները (ներառյալ ռամսարին, թոնեքարոնին և քելարդաշին), որոնք սովորաբար համարվում են մազանդարանի բարբառներ և տարածված են այս նահանգի արևմտյան մասում: Մազանդարանի խմբից առանձնացվել են նաև Թեհրանից դեպի Մազանդարան ճանապարհի որոշ գյուղերի բարբառներ՝ այն է Վելաթրու, Յուշ և Ջաշրուդ գետի վերին վտակների գյուղերի բարբառները: Հեղինակը դրանք համարել է «կենտրոնական Ալբորզի միջանկյալ բարբառներ»:

Սեմնան նահանգի բարբառները (այդ թվում՝ սեմնանի, սանգեսարի, սորխեի, յասգերդի, աֆթարի, շահմիրգադի և բիյաբունեքի) մյուս բարբառներն են, որոնք քննարկվել են հեղինակի կողմից:

Նշված շրջանների լեզվամիության մասին խոսելու համար հեղինակը ընդունել է չորս չափանիշներ՝ համաժամանակյա վիճակ, տարածման արեալ, սահմանափակ թվով անդամ-լեզուներում ընդհանուր հատկանիշներ և զուգաբանություններն առանձնացնելու համար «առաջնային-մարզինալ օգտագործման» սկզբունքը: Ինչպես հեղինակը հստակ նշում է, այս աշխատանքը զուտ լեզվաբանական հետազոտություն է, և հաշվի է առնում նաև տարածաշրջանում տարբեր լեզուներով (բարբառներով) խոսող խմբերի տեղաշարժը:

«Հնչյունական զուգաբանությունները» այս ատենախոսության առաջին մասն են կազմում: Հիմնված լինելով մի քանի հնչյույթների և հնչյունախմբերի (օրինակ՝ ա) ուսումնասիրության վրա՝ այս մասը նշանակալի է իր մի քանի թվարկված օրինակներով և տպավորիչ գրականությամբ: «Ձևաբանական զուգաբանությունները» այս ատենախոսության հիմնական մասն է կազմում և ներկայացնում է հինգ հիմնական խնդիրների մանրամասն և համապարփակ ուսումնասիրություն, ինչպիսիք են սահմանական եղանակի ներկա ժամանակաձևը, սահմանական եղանակի շարունակական ժամանակաձևը, պարթևերենի ըղձական եղանակի վրա հիմնված անկատարի կազմությունը, գոյության ժխտում արտահայտող *էի-էի-* մասնիկի առկայությունը, և, վերջապես, հոլովական համակարգը:



Այս մասերից յուրաքանչյուրն իսկապես տպավորիչ է ուսումնասիրված, օրինակ՝ սահմանական եղանակի ներկա ժամանակին նվիրված մասում նյութը բաժանվում է երկու խմբի՝ նրանք, որոնք կազմված են հին իրանական \*-ant-ով, և նրանք, որոնք կազմված են գրո ցուցիչով: Հեղինակը առաջին խմբի համար ներկայացնում է բազում օրինակներ զագայից, արևելյան գիլաքիից, մագանդարանիից, բարձրադիր շրջանի թալեղանիից (թաթոյիդ խումբ), վելաթրուլիից, յուշիից և ջաջոուդիից (կենտրոնական Ալբորզի միջանկյալ բարբառներ), քալարդաշթիից, թոնեբաբոնիից և ռամսարիից (կենտրոնական կասպյան բարբառներ), և սորխեիից, լասգերիից, աֆթարիից, սանգեսարիից և շահմիրզադիից (Սեմնանի նահանգի բարբառներ), ինչպես նաև երկրորդ խմբի համար օրինակներ է բերում հարավային թալիշերենից, արևմտյան գիլաքիից, կենտրոնական թաթերենից, ռուդբարիից (թաթոյիդ խումբ), և կենտրոնական կասպյան բարբառներից: Նույն մոտեցումն է կիրառվում նաև մյուս մասերում՝ շարունակական ժամանակաձևի ուսումնասիրության դեպքում. նյութը բաժանված է չորս մասերի (*andar*-ից կազմված օժանդակ բայով շարունակական ժամանակաձև, *kV(r)(V)* մասնիկով կազմված շարունակական ժամանակաձև, *andar*-ի և *kV(r)(V)*-ի համադրությամբ կազմված շարունակական ժամանակաձև և ցուցական դերանունով կազմված շարունակական ժամանակաձև):

Աշխատանքի հավելվածը՝ բառային գույքաբանությունները, իսկապես աշխատանքի տպավորիչ մասն են կազմում և ակնհայտորեն ցույց են տալիս հետազոտողի կատարած ջանքերը:

Ես իսկապես վայելեցի այս աշխատանքը կարդալը և շատ բան սովորեցի դրանում ներկայացված հարուստ նյութից: Տիկին Հակոբյանը ապացուցում է, որ շատ լավ ծանոթ է իրանական բարբառագիտության տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ գրականությանը, և դա կարելի է տեսնել իր յուրաքանչյուր քննարկման համար տրամադրած հղումների ընդարձակ ցանկում: Այն ինձ հիշեցնում է Կառլ Ջոն Բրանկեի հիմնական թեկնածուական ատենախոսությունը, որը նա պաշտպանել է գրեթե կես դար առաջ՝ կենտրոնական Իրանի լեզվական առնչությունների մասին: Հուսով եմ, որ նմանատիպ աշխատանքներ հնարավոր կլինի կատարել Իրանի մնացած մասերի (հատկապես հարավային և Պարսից ծոցի ափերի) մասին, որպեսզի ձևավորվի այսօրվա Իրանի լեզվական շփումների ամբողջական պատկերը:

Այնուամենայնիվ, ես առաջարկում եմ, որ տառադարձումների համար հետևողականորեն օգտագործվի *Encyclopaedia Iranica*-ի առաջարկած

համակարգը: Թեև հեղինակն ասում է, որ «դիակրիտիկ նշանները բաց են թողնվել այնտեղ, որտեղ խնդրո առարկա տեղանունը կամ բարբառը ընդհանուր առմամբ հայտնի է», կարծես թե դա անհրաժեշտ է որոշ բարբառների համար, օրինակ՝ Բիյաբաանաքիի դեպքում, որը տեքստում հիշատակվում է որպես Բիյաբունաքի: Նաև, կարծում եմ, քարտեզի վրա ուրվագծված իրական գուգաբանությունները (ինչպես արվել է Սթիլոյի և Քրանկեի նման գիտնականների կողմից) ավելի լավ կներկայացնեն աշխատանքը (հաշվի առնելով այն փաստը, որ ատենախոսության վերնագրի գուգաբանություն բառը արդարացնում է այս ակնկալիքը):

Ընդհանրապես, իրանական լեզուներով զբաղվող գիտնականների և ուսանողների համար նման ուսումնասիրությունը, որը ներառում է այդքան շատ իրանական լեզուներ, միշտ եղել է առաջնային խնդիր: Այն փաստը, որ տիկին Հակոբյանը կարողացել է շատ լավ օգտագործել ռուսերեն աղբյուրները (ինչը չեն կարողանում անել այս ոլորտի շատ այլ լեզվաբաններ, այդ թվում՝ ես նույնպես) այս աշխատանքի ուշագրավ կողմն է:

Որպես այս ատենախոսության մասին ունեցած ընդհանուր տպավորություն՝ կարող եմ ասել, որ այն շատ վստահեղի և համապարփակ աշխատանք է և հանդիսանում է լեզվական նյութի և արդի հղումների մեծապես օգտակար աղբյուր, և, անշուշտ, կգնահատվի իրանական լեզուների ուսումնասիրությամբ զբաղվող բոլորի կողմից: Տիկին Հակոբյանը ջանասիրաբար ուսումնասիրել է բոլոր համապատասխան հրապարակումները, ինչպիսիք են քերականությանը նվիրված աշխատությունները, տեքստային հրատարակությունները և մինչև այս պահը հրատարակված հոդվածները, և համակարգված կերպով ներառել է որոշ առավել կարևոր աշխատություններ: Հետևաբար, նրա աշխատանքը նաև ընթերցողին հնարավորություն է ընձեռում ծանոթանալ իրանցի գիտնականներին և ուսումնասիրել իրանական լեզվական նյութը, որոնցից շատերը հաճախ անհասանելի կամ պարզապես անհայտ են որոշ գիտնականների համար:

Ակադեմիական և ներկայացման տեսանկյունից՝ տիկին Հակոբյանը ներկայացրել է օրինակելի և բավականին ինքնատիպ թեկնածուական ատենախոսություն, որը կարդալը նաև հաճույք է պատճառում: Այսպիսով, թեզը կարևոր ներդրում է կատարում այս երևույթի ուսումնասիրության մեջ, որն այնքան ինտենսիվ չի հետազոտվել, որքան իրանական լեզվաբանության մյուս ասպեկտները, և ես առաջարկում եմ հնարավորինս բարձր գնահատել այս փայլուն աշխատանքը:

08-06-2022  
5